

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք

ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆ ՔԵՐԹՈՂՈՒԹԻՒՆ



ԹԷՍ ամէն տեսակ քերթողութեանց՝ բնագրողը պէտք է լինի երկնաւոր և գրեթէ աստուածային հուր կամ խանդ մի, անսովոր իմն աշխոյժ և եռանդն, որովք կը զանազանին բանաստեղծք ուրիշ սովորական մարդիկներէ կամ մատենագիրներէ. սակայն յատկապէս կը պատշաճին այս ձիւքերս Բնութեան մասին, զոր միայն յիրաւի արժան է բանաստեղծութիւն կոչել: Մեծաւ մասամբ արեւելեան բանաստեղծութիւնք քնարերգականք են, ինչպէս նաև երբայականներն, որք Ս. Գրոց մէջ կը գտնուին, Մովսիսի և Գեբորայի օրհնութիւնք, Յօբայ գիրքն, Դաւթի սաղմոսներն և այլն: Յոյնք ուղեւոր ծաղկեցնել գեթերթողութիւն, յատկապէս այս ճիւղս ընտրեցին. և անոնցմէ շատերն թողւով զայլ Մուսայս, նուիրեցին իրենք զիրենք Կլիայ դիցունւոյն, որ է պաշտպան քնարերգական քերթողութեան:

Մինչդեռ դիւցազներգութեան վրայ այլ և այլ մատենագիրք գրեւր են ընդարձակօրէն, իսկ քնարերգակ քերթողութեան վրայ սակաւ խօսեր են և այն ևս համառօտ: Վասնզի ոմանք, ինչպէս նաև Պուալոյ, Գոդին (ode) և Կարմեն (carmen) հետ նոյն կը համարին զայն. ուստի և զազդիացի բանաստեղծն հազիւ թէ 20-25 տող կը նուիրէ ասոր իւր Արտիստ Գեթերթողութեան հետեւ քերթութեան մէջ. իսկ Մարմոնթէլ, Լահարբ և այլք՝ անորոշ և անճիշդ կերպով կը սահմանեն զայն: Միայն Վիլմենի գեղեցիկ գործն¹, յորում կը խօսի Պինդարու հանճարոյն և քնարերգական քերթողութեան վրայ՝ իւր այլ և այլ առնչութեանց մէջ, կարելի է ամենէն աւելի լաւագոյն և լուրջ գրութիւնը համարել այս տեսակ քերթութեան մասին: Չանանք փոքր ինչ ճշդել զայն:

Ամենայն որ գիտէ Հարեանցի կերպով թէ Բնէ բան է քնարերգական քերթութիւն. այլ ո՞վ կարող է ճիշդ և զոհացուցիչ սահման մի տալ անոր: Սովորաբար կը համարուի, թէ Բնութեան կը կոչուի այն տեսակ բանաստեղծութիւնը, որ կամ քնարով կամ ուրիշ երաժշտական գործեօք կ'երգէին կամ կ'արտասանէին բանաստեղծք: Սակայն ի սկզբան չկար այս զանազանութիւնս, վա-

1. Essai sur le génie de Pindare et sur la poésie lyrique dans ses rapports avec l'élévation morale et religieuse des peuples.

սըն զի երգ և բանաստեղծութիւն դեռ ևս միադեպ էին իրերաց հետ: Սակայն ուր են արդ մեր քերթողաց քնարներն. բայց 'ի թատրոններէն ուրիշ տեղ չեն երգուի չիմակ բանաստեղծութիւնք: Դոյն իսկ Որստիոս և ուրիշ լատին քրնարերգակը չէին գիտեր այն Հրաշալի ներդաշնակութիւնը բանաստեղծութեան ընդ երաժշտութեան, ինչպէս էր սովորաբար Յունաց և այլ արևելեան ազգաց մէջ:

Սակայն Պուալոյ իսկական բան մի չհամարիր այս արտաքին ձև կամ յատկութիւնս. բոստ իրեն կարծեաց, քնարերգական բանաստեղծութեան իսկական գրողն կամ յատկութիւնն պէտք է լինի եռանդուն աշխոյժ մի սրտի կամ յափրշտակութիւն մտաց: Կ'ըսէ նա, թէ տաղն կամ քնարերգութեան հետ,

Խոյանօքրն սիգապանծ ամբարձաթոյչ եթերանձմ,

Ի տողս իւր չափածոյս գայ խառն 'ի խօսս ընդ ստտուածոց:

Արդ, ըստ Պուալոյի, լաւ քնարերգակ քերթող լինելու համար, պէտք է վեր ելնել բարձրագոյն գաւառաց մէջ, կամ մանաւանդ թէ յափշտակուի Մուսային զօրաւոր թևերով: Պուալոյ ամենայն ինչ կը զոհէ ներշնչութեան, նոյն իսկ կարգը և կանոնաւորութիւնը. և զուցէ Որստիոսէն աւելի ազատութիւններ կու տայ քնարերգակ քերթողին.

Յաճախ բուռն ոճոյ բանին ձեւք են ոտից զիարդուպէտ,

Երփոթք խառնակութեանդ՝ առ նրմա զիւտ ճարտարարուեստ:

Փէրրոյ կը բողոքէ այս բանիս դէմ, և կ'ըսէ՝ թէ Պինդարոս անիմանալի քերթող մ'է, զոր կ'ականարէ Պուալոյ, և որոյ բովանդակ քերթութիւնքն ուրիշ բան չեն, բայց միայն անիմաստ և մթին բացատրութիւնք: Իսկ ընդհակառակն Պուալոյ կը ցուցնէ ընդդէմ Փէրրոյի, թէ մթին և անիմանալի լինելը կարևոր և իսկական է քնարերգակ քերթութեան. և 'ի հաստատութիւն այս բանիս պինդարեան տաղ մի յօրինեց Կամուրի առման վրայ: Փէրրոյ կարգալով գայն, աւելի ևս պիճիզ կեցաւ իւր կարծեաց վրայ. և ինչպէս առերեք ծափ պիտի զարնէր, եթէ Վլոյդէոսի հետազայ տողերը կարդացած ըլլար.

Կաց 'ի չիրմէզ, աստուածայինըզ Պինդար,

Որ 'ի հրնիւն նուագաց առեր 'ի դրուատ

Ըզկորինթեայ կամ Մեգարեայ դու երբեմն

Ըզյաղթական բնական ոմանդ գերիւարս:

Որ զճիգ հարուստ ճառից հանճար ժառանգեալ՝

Այլ 'ի նոսին բանն ինչ երբեք չասելով,

Դաշնակաւոր արկեր ճարտարս 'ի նրւագ

Տօղս՝ որոց կար չիք բնաւ ումեք գով հասու,

Էւ որ յաւերժ հուշակեցնին 'ի գարմանս:

Հ. Պաթէօ կը խնայ ճշդիւ նշանակել քնարերգակ քերթողութեան իսկական բնագոյմը: Կա ուրիշ բուն չնկատեր անոր մէջ՝ բայց միայն եռանդուն խանդ մի, զոր երեք տեսակ կը զանազանէ. վսեմ, քաղցր և երկուքին մէջտեղ կամ խառն:— Սակայն այս ամէն անասուգութեանց մէջ միայն պատմութիւնն կարող է մեզի ապահով առաջնորդ ըլլալ. սակայն պատմութիւնն ևս չի սորուեցներ մեզ թէ ինչպէս պէտք է ըլլայ քնարերգակ քերթութիւնն, այլ թէ ինչպէս եղեր է նա անցելոյն մէջ. չէ կարող քաջատրել կամ վարդապետել մեզ թէ ինչ բան է խանդն. վսեմ զի հնոց համար խանդն էր այնպիսի հոգոյ մի վիճակն, յորում աստուծո մի կը տիրանար անոր, և մահկանանքէն կ'անհետանար գրեթէ. աստուած մ'էր որ կը խօսէր և կը ներշնչէր այն վսեմ բացատրութիւնները: Դարձեալ պատմութիւնն միայն կարող է սորուեցնել մեզ, թէ ո՞ր ժամանակ, ինչ պարագայներու մէջ սկսաւ և զարգացաւ քնարերգակ քերթութիւնն, որոնք եղան անոր ներկայացուցիչք, ինչ նիւթեր և ինչպէս երգեցին:

Նախ քան զՔրիստոս, յամս 700-460, որ է քսաներորդ ողիմպիադէն մինչև ութսներորդը, սկսաւ և ժողովեցաւ Յունաստանի մէջ քնարերգակ զերթութիւնն. զարմանալի դարաշրջան, յորում փայլեցան բեղմնաւոր հանձարներ: Ամէն կողմ կը կործանին հին թագաւորութիւնք, կը հաստատուին ազնուապետութիւնք. ապա կը գործանաւ բռնաւորք, կը տապալին անոնք ևս և կը յաղթանակէ ռամակալարութիւնն: Այս կռիւս՝ ընդ մէջ ազատութեան և գերութեան, որ երկու դարերէ աւելի տևեց, մարական պատերազմաց փառաւոր յաղթանակներով կը ելնէ իւր վերջը: Անկէ վերջը Ռթէնք՝ որ միայնակ դէմ դրաւ ամենայն ուժոյ բռնութեան Պարսից, ազատութեան օրբավայր մի կը լինի, և օրինակ ամէն ժողովրդոց: Այս երկու հարիւր յիսուն տարիներուն մէջ յոյն ժողովրդը՝ դոց զարմանալի բեղմնաւորութիւնը կը փայլի իւր անհամեմատ պայծառութեամբ: Նորանոր օրէնսդրութիւնք, նաւարկութիւն, փաճառականութիւն, արուեստք, զարգացումն կրօնական և քաղաքական հաստատութեանց, ողիմպիական մրցմունք, զաղթականութիւնք ամենայն ծովափանց վրայ, այս ամենայն իբրու յունական հանձարոյն ցոլացում մի կը լինին: Նախընթաց շրջանին մէջ զրեթէ անշարժ և ամուլ մնացեր էր յունական հանձարն՝ թագաւորներէն ընկճուելով. և ահա յանկարծ կը փայլի, կը կենդանացնէ ամէն բան, կը յուզէ զամենայն ինչ: Մինչև այն ատեն հագներգութեան միայն զիւցազներգական բանաստեղծութիւնը կը ժողկեցնէին. անոնք կ'երգէին միայն թագաւորաց արուեստները, զիւցազնութիւնքը, զօրավարաց քալութիւնները՝ որոնք Արաւմագոյն օրդիք կը համարուէին, հովիւք ժողովրդոց. իսկ մնացած ժողովուրդը բողոքովին մոռցուած էր. — բայց այնուհետև թագաւորք անհետ կ'ըլլան, կ'երևին ժողովուրդք, ազատ վարչութիւններ կը կազմեն, օրէնքներ կը հաստատեն: — Անշարժութիւնն կը դադրի. ամէն կողմ միանգամայն շարժումն և կեանք կը տեսնուին: — Քնարերգակ զերթողք նոր ընկերութեան ներկայացուցիչ ըլլան: Կը բացուի անոնց դիմաց աքաւս և անժայր ասպարէզ մի. այլ և չեն լսուիր խնձոյից մէջ այն երկար նուագաւոր պատմութիւնք՝ թագաւորները և ժողովրդեան իրխանները զուարճացնելու համար. մարդուս հոգին ընդարձակեր և ճախացեր է. կը կրէ նա իւր մէջ բազմութիւն մի նորանոր զգացմանց և գաղափարաց՝ որոնք խորին կերպով կը յուզեն զանկալ: Այն ներքին ընտանեկան կեանքն՝ որ անգործ մնացեր էր, յանկարծ ահա կ'արթննայ, գործօն և գեղեցիկ կերպով կը հանդիսանաւ երգերու մէջ: Աւելտա կը կուռի իւր հայրենեաց՝ Միտիլինէի Պիտտակոս բռնաւորին դէմ. տաղ մը միայն, քանի մի տուն երգ բաւական կ'ըլլան իրեն բացատրելու իւր ատելութիւնը ընդդէմ բռնաւորին, իւր ազատութեան սէրը, փափաքները, յոյսը և երկիւղը՝ որք կը յուզեն իւր սիրտը: Եթէ զերթողն հանդարտաբարոյ մէկն էր, եթէ իւր հայրենիքն ազատութիւն և խաղաղութիւն կը վայելէր, կ'առնուր իւր երգերուն նիւթ՝ կրօնական պաշտամանց փառաւորութիւնքը, հանդիսաւոր թափօրները, շքեղ տօները, այն ազգային կրօնքը, որ առանց հեղինակութեան և առանց օրէնսդրութեանց ազատ կերպով կը զարգանայ: Որքան երգեր և տաղեր կը յօրինէին զերթողք՝ ի պատիւ այն անթիւ աստուածութեանց, որոց իւրաքանչիւրն ունէին իրենց հայրենիքը և իրենց յատուկ պատմութիւնները. որոնք երբեմն մահականացուաց հետ մէկ տեղ ապրեր, սիրեր և կրէր էին մարդկանց նման, և այժմ կը բնակին երկնայարկ բնակարանաց մէջ, պաշտպան լինելով տէրութեանց և քաղաքաց: — Եթէ զերթողն իմաստուն մէկն էր, ինչպէս Սոգոն, Թէոգոն և Պիթագոր, իմաստուն խառններ և առածներ կ'առնուր իրեն երգերուն նիւթ, և բովանդակ ապալալ սերնդոց դաստիարակ կը հանդիսանայր: — Իսկ եթէ բուռն և վրէժխնդիր հո-

գի մ'էր, ինչպէս Արքիւղբոս, կը յօրինէր այն սոսկալի **Կեմբէ** (Yambe) չափը, որ կը թուէր խայթել և զկծանել այն թշուառ մարդիկները, որոնք համարձակեր էին վիրաւորել զինքը. — Եթէ քաղցր, գորովալիւր, խաղաղութեան և հաճոյից սիրող մէկն էր, ինչպէս Անակրէոն, կ'երգէր նա սէրը, խնոցը, ծաղիկները, և բեղմնաւոր խաղաղութեան վայելքները: — Իսկ եթէ եռանդուն և կրից մէջ զակատեալ անձ մ'էր, ինչպէս Սափոս, եռանդուն և աշխոյժ երգերու մէջ իւր սրտին անկարգութիւնները կը գրուէր. մինչդեռ մեղամաղձիկն Միմներմէ՝ ներդաշնակ և քաղցր հառաչանաց մէջ կ'ողբայ իւր անցած քաղցր տարիները, որք դարնան ծաղկանց պէս կը թառամին, առանց վերստին անոնց պէս բողբոջելու: — Բայց ամենէն աւելի առատ աղբիւրն՝ փառասիրութեան կիրքն էր: Յունաստանի ամէն կողմէն և ամէն կղզիներէն խուռն բազմութեամբ կ'ընթանային յՈլիմպիա, 'ի Կորինթոս, 'ի Պիթոյ, 'ի Նեմէա, յաղթական սարդենի պսակին համար մրցելու ձերնթացիկ և ըմբշամարտութեան խաղերուն մէջ: — Որքան ճոխ նիւթեր քնարերգակ քերթողաց համար:

Շարունակելի

..

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆ

ԺԷ ՄԱՂՄՈՍԻՆ

Կը սիրեմ քեզ, Տէր, սըրտանց
իմ զօրութիւնս, հաստատուիչ.

Ապաւէն իմ, Տէր Աստուած.

ինձ օգնական և փրկիչ:

Յոյսըս բոլոր քոյ վրայ

Դրրած եմ, Տէր, հաստատուն.

Քեզմէ զատ մէկը չը կայ

Որ տայ ինձի փրկութիւն:

Աղայելով դէպ ի քեզ

կողկողազին կը դիմեմ.

Դուն ես որ զիս կը փրկես

իմ թըշնամեացես ձեռքէն:

Չորս դիս բոլոր պատեցին

Երկիւղ, տագնապ մահացու.

Տակնովերայ զիս արին

Հեղեղք մեղաց ահարկու:

Վիշտք դըժոխոց, խըղճի խայթ

Պաշարեցին իմ բոլոր.

Հասաւ լարուած որոգայթ

Վըրաս՝ մահուն ահաւոր:

Նեղութեանց տակ ճընշուած

Չայնըս յերկինք վերցուցի: